ՆՈՐԱՅՐ ԲԱԼԱՅԱՆ
«Ի Էլ Էլ» իրավաբանական գրասենյակի գործընկեր,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հեղինակի կողմից սույն աշխատության շրջանակներում ներկայացվել են մասնավոր կյանքի սահմանադրահիրավական երաշխիքները սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Ուսումնասիրվել է միջազգային փորձը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Հատուկ ուշադրություն է դարձվել, թե որ դեպքերում է հնարավոր սահմանափակել անձի մասնավոր կյանքը, քննարկվել են սահմանափակման և անձեռնմխելիության համաչափության կանոնները:

Հիմնաբառեր- *մասնավոր կյանք, անձեռնմխելիություն, անձնական տվյալներ, սահմանափակումներ, միջամտություն, որոշակիություն:*

Մասնավոր կյանքը կազմում է մարդկային գոյի այն հատվածը, որի սահմանները յուրաքանչյուր ոք իր հայեցողությամբ որոշում է. անձը ինքնուրույն է հաղորդակից դարձնում երրորդ անձանց իր անձնական կյանքի մասին տեղեկատվությանը: Դա մարդու կյանքի այն մասն է, որն անձեռնմխելի է շրջապատի համար: Յուրաքանչյուր անձ ձգտում է իր գիտակցական կյանքի ընթացքում ունենալ անձնական ներաշխարհ, որը հեռու կլինի այլ անձանց միջամտությունից: Մարդը հասարակության անդամ է. նրա կյանքի հիմնական մասն անցնում է ընտանիքում: Ա.Ս.Պուշկինը իր կնոջը հասցեագրված նամակում նշում էր. «…. Առանց քաղաքական ազատությունների ապրել հնարավոր է, իսկ առանց ընտանեկան անձեռնմխելիության անհնար է…:»: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության դերակատարումը այնքան արժևորվեց, որ նախատեսվեց նաև հիմնական օրենքներով:

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Սահմանադրության 23-րդ հոդվածը կարգավորում էր մասնավոր կյանքի հետ կապված հարաբերությունները: Այսպես՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր անձնական և ընտանեկան կյանքը:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին կետը սահմանեց. «Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:»:

Առաջին անգամ միջազգային իրավական փաստաթղթային մակարդակով սկսվեց խոսվել մասնավոր կյանքի մասին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածում, որի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության գաղտնիության իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունը այդ իրավունքի իրականացմանը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է (Մարդու իրավունքների մասին կոնվենցիա) ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակության կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը նույնպես ինքնուրույն իրավակարգավորում նախատեսեց մասնավոր կյանքի կարգավորմանը, մասնավորապես՝ 14-րդ հոդվածի համաձայն. «… Մամուլին ու հասարակությանը կարող է թույլ չտրվել մասնակցել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի ***մասնավոր կյանքի*** շահերը կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը…:»:

Սակայն հարց է ծագում, թե ինչ է իրենից ներկայացնում մասնավոր կյանքը: Իրավաբանական գրականության մեջ չկա մասնավոր կյանքի բնորոշում, ինչպես նաև չկա միասնական դիրքորոշում մասնավոր կյանքի սահմանների վերաբերյալ: Մասնավոր կյանք ասելով՝ կարելի է հասկանալ անձի ֆիզիկական և հոգևոր այն հատվածը, որտեղ առկա է յուրաքանչյուր անձի ***ինքնիշխանությունը***: Մասնավոր կյանքը իր բնույթով բազմազան է. այն իր մեջ կարող է պարունակել ցանկացած հարաբերություն, հատկանիշ, որը վերաբերում է մարդու ներաշխարհին, այսինքն՝ մասնավոր կյանքի ոլորտի մեջ կարելի է ներառել նաև անձի առողջությունը,

www.journal.lawinstitute.am

նրա սոցիալական, քաղաքական, կրոնական և այլ հայացքները, մասնագիտական հետաքրքրությունները, նյութական վիճակը և այլն:

Ամերիկյան հայտնի հետազոտող Ալան Վեստինը տարբերակում է մասնավոր կյանքի չորս տեսակներ. առաջինը՝ մեկուսացում, որի պարագայում յուրաքանչյուր ոք արգելում է երրորդ անձանց միջամտությունը, երկրորդը՝ ինտիմությունը. այս դեպքում անձը շփվում է սահմանափակ թվով մարդկանց հետ, երրորդը՝ զսպվածությունը, երբ առկա է հստակ անջրպետ անհատի և նրա շրջապատի միջև, չորրորդը՝ գաղտնիությունը, երբ անձը, գտնվելով հասարակության մեջ, փորձում է լինել անտեսանելի[1]:

2015 թվականին առաջին անգամ Սահմանադրությամբ ամրագրվեց անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխիք: Մասնավորապես՝ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:»:

Սակայն, մինչ Սահմանադրությամբ նախատեսելը, 2015 թվականի մայիսի 18-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալը ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկությունն է, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Հարց է ծագում՝ արդյոք անձի մազերի գույնը անձնական տվյալ է, թե ոչ, արդյոք անձի մազերի գույնը վարսավիրի կողմից հրապարակելը մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտում է, թե ոչ: Սրանք այն պարզ հարցերն են, որոնց վերաբերյալ լուծումը օրենսդրական մակարդակով տրված չէ, այլ լուծումը հնարավոր է գտնել միայն դատական պրակտիկայի միջոցով: Ցավոք, պետք է նշել, որ ներպետական դատական պրակտիկան այդքան էլ հարուստ չէ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո եվրոպական մի շարք երկրներում սահմանադրական մակարդակով ամրագրվեց անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասին: Գերմանիայի Սահմանադրությամբ անմիջականորեն չնշվեց մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասին, բայց նշված հարաբերությունները կարգավորվեցին 10-րդ և 13-րդ հոդվածների համատեքստում: Գերմանիայի Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության գաղտնիության իրավունք, իսկ 13-րդ հոդվածը կարգավորում է բնակարանի անձեռնմխելիության հետ կապված հարաբերությունները[2]:

Անձնական կյանքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Իտալիայի Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության գաղտնիության ազատություն:

Ճապոնիայի Սահմանադրության 35-րդ հոդվածը կարգավորում է անձնական կյանքի անձեռնմխելիությունը:

Հունաստանի Սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝ մարդու անձնական և ընտանեկան կյանքը անձեռնմխելի է:

ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ հնարավոր չէ գտնել որևէ իրավակարգավորում մասնավոր կյանքի անձեռնմխելիության վերաբերյալ: Միայն 20-րդ դարում ԱՄՆ Գերագույն դատարանը իր որոշմամբ ամրագրեց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը[3]: Տեղին է հիշատակել մասնավոր կյանքի անձեռնմխելիության վերաբերյալ ամերիկյան փաստաբաններ Բրանդեյսի և Ուորրենի կողմից 1890 թվականին հրապարակված հոդվածից մեջբերում. «… զարգացող քաղաքակրթությունները նպաստում են, որ յուրաքանչյուր անձ ունենա առանձին վայր, որտեղ առկա է ***անձի մասնավոր կյանքը*** (ընդգծումը մերն է), սակայն արդյունաբերական և տեխնիկական զարգացումը այնպիսի բացասական ազդեցություն է ունենում անձի մասնավոր կյանքի վրա, որն ավելի դաժան է, քան ֆիզիկական բռնության գործադրումը:»:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի հոկտեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշման մեջ արձանագրել է, մեջբերում եմ. «Անհավատարմությունն այս առաքելությանը, կեղծ փաստերով շահադիտական կամ կանխամտածված այլ նպատակներով անձին անվանարկելը, նրա անմեղության կանխավարկածին վնաս հասցնելը կամ անձնական կյանքին միջամտելը պետք է համարժեք իրավական գնահատական ստանան: Իր հերթին, երաշխավորված ու պաշտպանված պետք է լինի խոսքի և արտահայտվելու ազատության իրավունքը, և պատասխանատու մամուլի կենսունակությունը չպետք է վտանգվի:»:

Թեև իրավաբանական գրականության մեջ և իրավակիրառ պրակտիկայում չի նշվում մասնավոր կյանքի օբյեկտները, այլ միայն կարող ենք պատկերացում կազմել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված որոշումների համատեքստում:

ՄԻԵԴ-ը հետևյալ դեպքերում սահմանել է, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի խախտում.

1) Երեխաներին իրենց ընտանիքից կտրելը և պետության կամ այլ խնամատարների խնամքին հանձնելը.

2) Անձի մարմնի և տան խուզարկությունը.

3) Հեռախոսազրույցների գաղտնալսումը և հաղորդակցության գաղտնազերծումը ընդհանրապես՝ անկախ օգտագործված միջոցից.

4) Տեղահանված անձանց իրենց տները վերադառնալ թույլ չտալը.

5) Բանտարկյալների հաղորդակցության

(նամակագրության) կասեցումը և կամ վերահսկումը.

6) Անհատների տվյալների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու պահպանումը.

7) Քաղաքաշինական պլանավորման հետ կապված որոշումները.

8) Վտարման որոշումները.

9) Գանգատարկուի անձնական կյանքին միջամտող որոշակի իրավական ռեժիմի շարունակական պարտադրումը.

10) Իշխանության թերացումը՝ կատարելու այն դատական որոշումները, որոնք կոչված են անձին պաշտպանել մեկ այլ ագրեսիվ անձից.

11) Աշխատողին նրա անձնական կյանքին վերաբերող պատճառով աշխատավայրից վտարելը.

12) Դատապարտված անձի նկարների հեռարձակումը, որը թույլատրվել է ոստիկանության կողմից.

13) Ազատազրկվածի բանտախցի մոտակայքում գտնվող աղբակույտից տարածվող տհաճ հոտի առկայությունը.

14) Նորածնին լուսանկարելն առանց նրա ծնողների նախնական համաձայնության և նեգատիվները պահպանելը.

15) Պետական հիվանդանոցում բժշկական սխալի հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների ապաքինման միջոցներ չապահովելը.

16) Գաղտնի ծառայությունների տրամադրության տակ գտնվող անձնական թղթապանակներին հասու դառնալու ընթացակարգի անարդյունավետությունը.

17) Հարկադիր բուժման նշանակումն առանց դիմողի համաձայնության կամ նրա մշակութաբանական հավատամքին հակառակ՝ կապված նրա ազգային պատկանելության հետ.

18) Անհատական տվյալներին, այդ թվում բժշկական տեղեկություններին, առանց թույլտվության հասու դառնալը.

19) Անվան մուտքագրումը սնանկության ռեգիստրում.

20) Անձի կողմից տվյալ վայրում մշտապես բնակվողների ցանկից իր անունը հանելու անհնարինությունը.

21) Անձը հաստատող փաստաթղթի ժամկետի երկարաձգման կամ վերադարձի մերժումը.

22) Որևէ վայրում բնակություն հաստատած ներգաղթյալի արտաքսումը:

ՄԻԵԴ-ը յուրաքանչյուր գործով իրականացնում է երկփուլ գնահատում: Առաջին փուլում ՄԻԵԴ-ը ուսումնասիրում է՝ արդյոք դիմումատուի բողոքը տեղավորվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում, երկրորդում՝ արդյոք տեղի է ունեցել միջամտություն, այսինքն՝ արդյոք խախտվել է անձի մասնավոր կյանքի իրավունքը:

ՄԻԵԴ-ը Չենգելյանը և մյուսները ընդդեմ Բուլղարիայի վճռում արձանագրել է, որ դիմումատուներին հասանելի չի եղել տան ապամոնտաժման գործընթացը, հետևաբար խախտվել են ապամոնտաժման համաչափության կանոնները, որոնք էլ իրենց հերթին նպաստել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմանը:

Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ շատ են դատական գործերը ԱՄՆ-ում՝ հաշվի առնելով այն, որ դատարանը սահմանել է համաչափության սահմանները, որոնց խախտման դեպքում առկա է մասնավոր կյանքին միջամտություն: Այսպես՝ Քեթրին Զեթա Ջոնսի և Մայքլ Դուգլասի հարսանիքի ժամանակ անօրինական լուսանկարահանում էր իրականացրել այն զանգվածային լրատվության միջոցը, որը դրա համար արտոնագրված չեր եղել: Եվ հայտնի դերասանները դիմել էին դատարան՝ համարելով՝ լուսանկարների հրապարակումը ոտնձգություն է մասնավոր կյանքի նկատմամբ: Լոնդոնի դատարանը արձանագրել էր, որ, հաշվի առնելով այն, որ նախօրոք տեղեկացված են եղել արտոնագրված ընկերության կողմից լուսանկարման մասին, ուստի չարտոնագրված լուսանկարները և դրանց հրապարակումը չի կարող համարվել մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտում[4]:

Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»: Այս կետում առկա սահմանումը մտահոգության տեղիք է տալիս, քանի որ պետության կողմից ըստ էության մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կարող է սահմանափակվել զանազան հիմքերով. այն սպառիչ չէ: Այստեղ մրցակցություն է առաջանում մի կողմից անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, իսկ մյուս կողմից պետական անվտանգությունը ապահովելու համար կամ այլ հիմքերից ելնելով: Սահմանադրության մեջ նշվում են սահմանափակման հետևյալ հիմքերը. պետական անվտանգություն, երկրի տնտեսական բարեկեցություն, հանցագործությունների կանխում և բացահայտում, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանություն: Ակնհայտ է, որ «պետական անվտանգություն» եզրույթը այնքան լայն է, որ իր մեջ ընդգրկում է Սահմանադրության մեջ նշված մյուս հիմքերը և տնտեսական բարեկեցությունը, հասարակական կարգի պաշտպանությունը և մյուս հիմքերը: Միևնույն իրավիճակն է առկա նաև այն դեպքում, երբ մասնավոր կյանքի անձեռնմխե-

լիությունը սահմանափակվում է այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նկատառումով: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Սահմանադրությունը հղում է կատարում օրենքին, ապա հարց է ծագում՝ օրենքը ինչ հարաբերություններ է կարգավորելու, եթե սահմանափակման հիմքերը արդեն իսկ նախատեսված են Սահմանադրությամբ, և օրենքը չի կարող դուրս գալ այդ հիմքերի շրջանակից, հետևաբար օրենքով պետք է նշվի սահմանափակման կարգը:

Գտնում ենք, որ նման ընդհանրական հիմքեր նախատեսելը խաթարում է իրավական որոշակիության սկզբունքի կանոնները: ՄԻԵԴ-ը իր նախադեպային իրավունքում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, որ անձի հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է հստակ ձևակերպված լինեն և բավարար չափով որոշակի: Ավելին, Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանվեց որոշակիության սկզբունքը. «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»: Մինչդեռ այս պարագայում հիմքերը հստակ ձևակերպված չեն: Թեև, արդարության սկզբունքից ելնելով, անհրաժեշտ է նշել, որ դատական պրակտիկայի աղքատությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ էր սահմանել սահմանափակման հիմքերը՝ միաժամանակ դատարաններին տալով հնարավորություն այլ հիմքերի առկայության դեպքում սահմանափակել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը՝ մասնավորապես այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

---

[1] http://www.hrights.ru/text/bogoraz/Chapter3.htm
[2] http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/germany/german-r.htm
[3] http://www.hrights.ru/text/bogoraz/Chapter3.htm
[4] http://www.theguardian.com/media/2007/may/03/pressandpublishing.zetajonesvhello

Норайр Балаян
Портнер “И ЭЛ ЭЛ” юридической фирмы,
кандитат юридических наук

РЕЗЮМЕ

Конституционно-правовые гарантии частной жизни

Статья посвящена гарантиям частной жизни. После поправок в Конституции произошли значительные изменения по регулированию частной жизни. В статье дан сравнительный анализ по частной жизни. Сравнительный анализ начинается с международного опыта, поскольку в судебной практике Армении его очень мало. В статье есть список в каких случаях ЕСПЧ рассматривает нарушение частной жизни.

В каких случаях можно ограничить неприкосновенность частной жизни. После поправок Конституция регулирует даже те отношения, когда можно ограничить неприкосновенность частной жизни. У основ ограничения есть общий характер, что позволяет отметить, что безгранично можно ограничить неприкосновенность частной жизни.

Ключевые слова: *частная жизнь, неприкосновенность, личные данные, ограничение, вмешательство, определенность.*

Norayr Balayan
Executive Partner,
PHD in Law

RESUME

Legal constitutional guarantess private life

The article is devoted to legal guarantees of private life. After the amendments to the Constitution, there have been significant changes in the regulation of private life. There is a comparative analysis of private life in the article. Comparative analysis begins with international experience; as judicial practice is very small in Armenia. The article has a list of cases in which the ECHR considers the violation of private life.

When the inviolability of the private life can be limit. After the amendments the Constitution regulates the relationships even the private life can be limit. The limitations have general nature which allows to restrict private life without any limits.

Keywords: *private life, immunity, data, limitations, intervention, distinctness.*